«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԾՁԲ -1

ք. Երևան «25» « 02 » **2015թ.**

<<Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա. Գևորգյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, այսուհետ՝ <<Կատարող>>, ի դեմս տնօրեն Ա. Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան Պատվիրատուին մատուցել ՀՀ արդարադատության նախարարության թվով 600 (վեց հարյուր) հատուկ ծառայողների վերապատրաստման և թվով 1923 (մեկ հազար ինը հարյուր քսաներեք) հատուկ ծառայողների հատուկ ուսուցման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցած Ծառայությունը և վճարել դրա համար:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3. Ծառայությունների մատուցման վերջնաժամկետն է 2015թ դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 344259072 (երեք հարյուր քառասունչորս միլիոն երկու հարյուր հիսունինը հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

Ծառայությունը մատուցվում է 0 (զրո) տոկոս շահույթով:

4.2 Պատվիրատուն Պայմանագիրը կնքելուց հետո 7 օրվա ընթացքում, որպես կանխավճար, Կատարողին վճարում է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող

հավելված 3-ով՝ վճարման ժամանակացույցով սահմանված առաջին եռամսյակի համար նախատեսված գումարը՝ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար, այնուհետև կատարում է ամսական վճարումներ հավելված 3-ով սահմանված չափաքանակներով:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, բայց ոչ ուշ քան մինչև 25.12.2015թ. (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, իսկ եթե կազմվում են մինչև 20-ը՝ ապա 10 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

4.4 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում

սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա. Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ. եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագրով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1. 2.

3 և 4 հավելվածները՝ բաղկացած 5 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7.8 պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակից և (կամ) պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կատարող՝**
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք.Երևան, Հալաբյան 41ա,	ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռ. 380250	հեռ. 574406
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011194272	Հ/Հ 1570003271040500
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝	Տնօրեն՝
Ա. Գևորգյան	Ա. Հայրապետյան
ԿՏ	ԿՏ

Հավելված N 1
«25» «02» 2015 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ԵՁԲ - 1 ծածկագրով
Գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության բոլոր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների վերապատրաստում:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնող հարկադիր կատարողների վերապատրաստում:

3. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության բոլոր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների հատուկ ուսուցում:

4. Դասընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 154-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-67-Ն և 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 186-Ն հրամաններով հաստատած կարգերով: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած ժամկետներում և ծրագրերով:

5. Հատուկ ուսուցման ծրագրով նախատեսված կրակային դասընթացը ներառում է 9x18 մմ տրամաչափի «Բայկալ 442» կարճ ակոսափող հրազենով 12 և «Նշանակետ» էլեկտրոնային հրածգային վարժասարքի «AK 47» ինքնաձիգով 15 կրակ արձակելու գործնական դասընթաց (յուրաքանչյուր ծառայողի համար):

6. Դասընթացներն իրականացվում են Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենք և ք. Երևան, Մ. Խորենացու 162 ա հասցեներում:

7. «Գորիս», «Արթիկ», «Սևան», «Վանաձոր» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների ծառայողների, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզային բաժինների հարկադիր կատարման ծառայողների դասընթացների իրականացման ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենքի կացարաններում վերոնշյալ ծառայողներին, ունկնդիրների ցանկության դեպքում, ընձեռնվում է անվճար գիշերելու հնարավորություն:

8. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Աբովյան», «Արմավիր», «Գորիս», «Սևան» և «Հրազդան» քրակատարողական հիմնարկների քրեակատարողական ծառայողների հատուկ ուսուցման և վերապատրաստման դասընթացների իրականացման ժամանակահատվածում Կատարողը ապահովում է Երևան քաղաքից դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ

նրբանցք, N 56 հասցե (և հակառակը՝ դեպի Երևան) ուղևորափոխադրումը՝ ունկնդիրների ցանկության դեպքում:

9. ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողներին՝ միայն վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացման օրերին, Կատարողը ապահովում է մասնակի սննունդով (երկու անգամ թեյի և (կամ) սուրճի ընդմիջում, մեկ անգամ ճաշի տրամադրում /հյութ, տաք ուտեստ, աղցան/):

Պատվիրատու՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ»
պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Հալաբյան 41ա,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Ա. Գևորգյան

ԿՏ

Կատարող՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռ. 574406
ՀՎՀՀ 02509478
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003271040500

Տնօրեն՝

Ա. Հայրապետյան

ԿՏ

Հավելված
«25» «02» 2015 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ԾՁԲ - 1 ծածկագրով
գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Դասընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած ժամկետներում, քանակներով և ծրագրերով:

Պատվիրատու՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ»
պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, 375010, Հալաբյան 41ա,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Ա.Գևորգյան

ԿՏ

Կատարող՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

ք. Երևան, 375010, Մ. Խորենացու 162ա,
ՀՎՀՀ 0209478
«Ամերիաբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 1570003271040500

Տնօրեն՝

Ա.Հայրապետյան

ԿՏ

Հավելված
«25» «02» 2015 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ԾՁԲ - 1 ծածկագրով
գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

(հազ. դրամ)

Ձեռք բերվող ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015 թ. պետական բյուջեից, ընդ որում (*թվերը ներկայացված են աճողական կարգով)											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմ.	դեկտեմ.
ՀՀ ԱՆ հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում	344259.1	----	------	65757.3	93529.1	121300.9	149072.7	176844.5	204616.4	232388.2	269678.5	306968.8	344259.1

Պատվիրատու՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ»
պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, 375010, Հալաբյան 41ա,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Ա.Գևորգյան

Կ.Տ

Կատարող՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

ք. Երևան, 375010, Մ. Խորենացու 162ա,
ՀՎՀՀ 0209478
«Ամերիաբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 1570003271040500

Տնօրեն՝

Ա.Հայրապետյան

Կ.Տ

Հավելված 4
«25» «02» 2015 թ. կնքված
N «ՀՀ ԱՆ ԾՁԲ-1» ծածկագրով
գնման պայմանագրի

Կատարող
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.